ԲԱՆԱՀԱՎԱՔ

ՄԵՆՔ ԵՎ ՄՈՒՆՔ

հումանիտար ծրագիր

Ծրագիրն իրականացվում է «Զարգացման Սկզբունքներ» ՀԿ-ի կողմից՝ Sign of Hope (SoH) կազմակերպության հետ համատեղ և Գերմանիայի Դաշնային հանրապետության արտաքին գործերի նախարարության (GFFO) ֆինանսավորմամբ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Մենք և Մունք» 2024–2025 թթ. ծրագրի շրջանակներում Հայաստանի 3 մարզերում տեղի և արցախցի դեռահասների մասնակցությամբ անցկացվել է բանավոր պատմության և ուտեստների բաղադրատոմսերի աշխատարան: Նպատակն էր երիտասարդներին կապել իրենց ժառանգության հետ՝ ուսումնասիրելով ընտանեկան պատմությունները և ավանդական խոհանոցը: Մասնակիցները հարցազրույցներ են անցկացրել իրենց համայնքների տարեցների հետ՝ հավաքելով անձնական պատմություններ և սերնդեսերունդ փոխանցված սիրված բաղադրատոմսեր: Գործնական սեմինարը դեռահասներին տրամադրել է բանավոր պատմության տեխնիկայի, ձայնագրման մեթոդների և պատմությունների հավաքագրման վերաբերյալ հիմնական ուսուցում: Նրանք գրի են առել համայնքային միֆերի, առեղծված պատմությունների կամ հերոսների կյանքի հետ կապված հիշողություններ: Այս պատմությունների հետ մեկտեղ դեռահասները հավաքել են ավանդական ուտեստներ՝ ուսումնասիրելով դրանց մշակութային նշանակությունը: Այսպիսով իրենք դարձել են իրենց համայնքային մշակույթի պահապանները: Բանավոր պատմությունը և ուտեստների բաղադրատոմսերի հավաքագրումը համատեղելով՝ աշխատարանը ստեղծել է իմաստալից կամուրջ հիշողության, ինքնության և համայնքի միջև:

ԱՅՐՈՒՄ

Իմ պապիկի պապիկը զարմանալի հատկություն ուներ: Նա կարողանում էր աստղերին նայելով գուշակել՝ ինչ եղանակ է սպասվում առաջիկա 15 օրերի ընթացքում: Երբ նրան հարցնում էին՝ ինչպես է գուշակում, ասում էր, որ աստղերն իրեն հուշում են հստակ նշաններով, որոնք միայն ինքն է հասկանում: Ասում էր, որ դա աստվածային շնորհ է և իր անունը հենց այնպես չի Ասատուր, ինչը նշանակում է Աստվածատուր՝ Աստծուց տրված: Բոլորը հավատում էին նրան, որովհետև նա նաև գուշակում էր ապագան: Օրինակ, նա մեկ ամիս առաջ գիտեր իր մահվան օրը և նախօրոք պոկել էր օրացույցի այդ թերթն ու զգուշացրել իր որդուն: Իսկ այդ օրը արդեն որոշված էր նշել պապիկիս մորեղբոր տղայի հարսանիքը: Պապիկը խոստացավ համբերել մինչև հարսանիքի ավարտը և ուղիղ ժամը 12–ին հավիտյան հրաժեշտ տվեց բոլորին՝ իր հետ տանելով գուշակելու գաղտնիքը:

Վիկտորյա Չերչինյան

* * *

Լոռվա կողմերը, Չկալովկա գյուղումն ա էղել էս պատմությունը, որ հլա հինանց մարդիկ կըսեն, սուրնդանց սորունդ փսփսալով պռոց կտան: Էն վախտ գյուղը լեն–լեցուն, ղադա–ղադա ճամփեքը մարդ կըքայլեր, հողերն էլ լիքն էր պտուղներով, հոտերն էլ՝ խոտով կուշտ: Գյուղին վերևը լեռնանցք մը կար, ուր մի քարե կամուրջ կար, անունը՝ «Չերորդանց կամուրջ»: Կըսեն՝ հո որ լուսունջ գիշեր ըլի, էդ կամուրջի վրեն չերորդանք կհավաքվի, հոգիները կշշնջան դավկեն, կզմզան: Էդ սահմռկեցնող լեգենդը քիչ մարդ կը գիտի, վախենալով չեն պռոց տար: Ասին քիչ հարյուր տարի առաջ մի հովիվ ա էղել, Կարապետ անունով: Մի գիշեր հոտը վերադարձնելիս միանգամից կտեսնա, որ իր ամենասիրուն խոշորը բացակայում ա: Շիվար կըկենա, կըսկսի փնտրել: Կեթա, կեթա, կհասնի էդ Չերորդաց կամուրջին, կտեսնա՝ խոշորը կանգնած ա կամուրջի մեջտեղումը, բեխաբար, չի շարժվի: Կարապետը կըհամարձակվի կամուրջը ելնի, խոշորը հետ գցի, հա էրկու քայլ կընե, հո քամին միանգամից կըբլրա, կամուրջը կդողա: Մի տեսնի, մառախուղի մեջեն ուրվականներ կերևան՝ երկար, ճղճիմ շորերով, ճերմակ, փոս ընկած աչքերով, ոսկոր–մոսկոր ձեռքերը երկարած: Էնքան սահմռկեցնող էին, Կարապետին սիրտը բկանը կուգա: Ուրվականները շշունջով կըսեն «Մենք մեղավոր հոգիք ենք, որ ապրած ժամանակ անիրավ ենք էղել, սուտ ենք արել: Մեր պատիժն ա էստեղ կախ ընկած մնալը, վայ թե մինանք, հո մինը մեզ կների»: Կարապետը՝ խեղճը, կմնա քարացած: Գետինը կընկնի, աղոթքը կըսկսի, ի՞նչ անի, բեկված կմնա: Հետո մի ուրվական կըսի. «Քու սիրտը բարի ա, Կարապետ

ջան, հո կարաս մեզի ներես, մենք էդ օրվան հետ ազատ կէղնինք, էս կամուրջն էլ էլի մարդիկ կքալեն, առանց վախենալու»:

Կարապետը աչքերը կբացի, դողդողալով կնայի ուրվականին, արցունքները կթորվին աչքերին, քարերուն կընկնին: Հանկարծ կփայլատակի, գիշերը կլուսանա, ուրականները կչքանան, մառախուղը կցրվի: Խոշորը հլա կանգնած, բեխաբար կսպասի: Ասում են՝ էդ օրվանից Չերորդանց կամուրջը էլ ուրվական չի տեսել, բայց գյուղին ծերերը հո հլա էն կողմերով չեն քալիլ: Իսկ Կարապետը մինչ իր վերջը ամեն ամառ էդ կամրջի կողքին մոմ կվառեր, աղոթք կկարդար: Էդ օրվանից գյուղումը ըսում են, թե հովիվի բարի սիրտը փրկեց թե՛ իրեն, թե՛ ուրվականներին:

Սյունե Դավթյան

* * *

Ժամանակին մի գեղեցիկ աղջիկ է եղել: Ասում են, որ երբ նա ծիծաղել է՝ չորս կողմը վարդեր ու ծաղիկներ են բացվել, երբ լաց է եղել՝ անձրև է եկել: Դևերը գողացել են նրան ու տարել ձորի ամենամութ տեղը, ուր երբեք արևի լույս չի ընկնում և չկա ոչ մի կենդանի շունչ: Աղջիկն անդադար լաց է եղել: Ասում են՝ դրա համար էլ Մթնաձորում շարունակ թուխպ ու անձրև է լինում: Երբ եղանակը կարճ ժամանակով պարզվում է, ասում են, թե աղջիկը քնի մեջ ծիծաղում է:

* * *

Շաքեն մի գեղեցկուհի էր, որի մասին շատերն էին խոսում: Երբ արաբները հարձակվում են, սուլթանը հրամայում է Շաքեին բերել իր մոտ: Շաքեն չի ուզում գնալ, և անելանելիությունից իրեն ցած է նետում ժայռից: Նրա հագուստի փեշերը ծածանվում են օդում և առաջացնում ջրվեժ, որը հետագայում կոչվում է «Շաքեի ջրվեժ»:

Մարիա Լանգ

* * *

Այրում բնակավայրը հիմնադրվել է 1937 թ.– ին որպես փոքրիկ գյուղ Նոյեմբերյանի շրջանում: Այրումը կառուցվել է Լճկաձոր գյուղի վերին հատվածի վրա, այն ժամանակ, երբ կառուցվեց պահածոների գործարանը: Այրումի անվանումը ծագում է «այրվել» բառից, ասում են՝ գյուղը հիմնել են այն մարդիկ, ում նախկին բնակավայրերը թշնամիներն այրել են:

Գաբոյան Վրեժ



ՍԻՍԻԱՆ

Մի ծաղրածու կար մեր գյուղում, շատ ուրախ էր, երջանիկ ու նաև խելացի: Իր ներկայությամբ նա բոլորին երջանկացնում էր: Օրերից մի օր նա այցելում է հոգեբանին և ասում, որ օգնության կարիք ունի: Հոգեբանը զարմանում է՝ չէ որ նա գյուղի ամենաուրախ մարդն է: Ծաղրածուն պատասխանում է, որ նա իրականում այն չէ, ինչ ցույց է տալիս ու իր ժպիտի տակ շատ մեծ տխրություն կա թաքնված:

* * *

Գյուղերից մեկում մի լավ սովորություն է եղել: Երբ Նոր տարի էր եղել, նոր գաթա են պատրաստել և հրավիրել գյուղի մարդկանց: Եվ բոլոր տներում այնքան շատ գաթա էին պատրաստում, որ մինչև Տրնդեզ ամբողջ գյուղը գաթա էր ուտում:

Արաքսյա Ղանդյան



ԿԱՊԱՆ

Մեղրիի անվան ծագման մասին կան տարբեր վարկածներ մեղրի կամ տեղական քաղցրահամ թզի մեղրահամ հյութի հետ: Ոմանք համարում են, որ Մեղրիի անվանումը ծագել է պարսկերեն միհր՝ «արև», բառից: Մի ավանդություն կա այն մասին, որ հայոց Արշակ Բ թագավորը Մեղրիի գինին խմելիս բացականչել է՝ «Գինու չէ նման, այլ մեղրի»:

Լինա Հարությունյան

* * *

Գյուղը հնում կոչվում էր Երից: Գյուղում կա 4 եկեղեցի, որից մեկը Երիցվանքն է, այն կառուցել է Երո անունով մի մարդ: Այդ պատճառով գյուղը հնում կոչվում էր Երից: Գյուղի հայտնի մարդկանցից են Վահրամ Սահակյանը և տանկ քշող Նորոն: Գյուղում կա հերոսների հուշահամալիր, որտեղ կա 6 հերոսի գերեզման: Գյուղի դպրոցի բացումը կատարել է պատմաբան Ռաֆֆին, հենց նա է հնչեցրել առաջին զանգը:

Ամալյա Ասրյան

* * *

Խաշիլ պատրաստելու եղանակը շատ պարզ է, բայց պահանջում է երկար ժամանակ. ցորենը բովում են, աղ անում, այնուհետև մաղում՝ առանձնացնելով մանրը մեծերից: Եռացրած ջրի մեջ սկզբից լցնում են խոշոր զանգվածը՝ անընդհատ խառնելով, իսկ վերջում ավելացնում մանր ցորենը, որպեսզի զանգվածը խտանա: Այնուհետև պատրաստում են սոխարած և թան: Խաշիլը լցնում են մեծ ափսերի մեջ, կենտրոնում փոսիկ բացում և լցնում սոխարածը, ափսեի կողքերով էլ լցնում թանը:

* * *

Կապանի մոտ գտնվող Դավիթ Բեկ գյուղը, ասում են, որ հենց Դավիթ Բեկի ցուցումով է հիմնվել: Այստեղ կա եկեղեցի, որը կառուցվել է 19–րդ դարի կեսերին և կրում է Ս. Ստեփանոս անունը: Գյուղում կանգնեցված է Երկրորդ աշխարհամարտում զոհված դավիթբեկցիներին նվիրված հուշակոթող: Գյուղում յուրաքանչյուր ընտանիք ունի իր թոնիրը, որտեղ թխում են հաց, լավաշ, պաղաճ (կլոր գաթա), հարիսա և այլն:

Վահե Մուշկամբարյան

ԱՐՃԻՍ

Պառավաքարը սահմանամերձ բնակավայր է: Ամեն անգամ, երբ թշնամին հարձակվում էր, սարի լանջին ապրող մի կին ճրագ էր վառում, որպեսզի զինվորներին տեղեկացնի հարձակման մասին: Բայց մի անգամ կինը չի կարողանում կրակը վառել, ու ստիպված վերցնում է իր տան զենքը, բարձրանում սարն ի վեր, որ անձամբ կռվի: Նա ոչնչացնում է թշնամուն մինչև զինվորների գալը, բայց ցավոք, նրան նույնպես չի հաջողվում կենդանի մնալ: Այդ օրից գյուղը կոչվում է Պառավաքար:

Միլենա Ներսիսյան

* * *

Տավուշ մարզի որոշ գյուղերում դեռևս հիշում են հին ժամանակներում ապրող հսկաներին կամ անսովոր ուժ ունեցող մարդկանց: Արճիսի մոտակայքում կա մի քարանձավ, որտեղ բնակվել են խիզախ մարտիկներ, ովքեր պաշտպանել են իրենց գյուղը թշնամիներից: Այդ քարանձավի մուտքը հիմա թաքնված է, ու միայն գյուղի մեծերը գիտեն այդ տեղը:

Նարե Քոչարյան

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ

Եղեռնի ժամանակ տատս ու պապս շատ հետաքրքիր ձևով ծանոթացան: Տատս Ղարսից էր, պապս՝ Էրզրումից: Փախստականների ճանապարհին 27–ամյա պապս նկատեց սայլի վրա նստած տատիս, որն այդ պահին 13 տարեկան էր: Ճանապարհին տատիս մայրը պապիս ասել է. «Եթե ես մահանամ ճանապարհին, կպահես աղջկաս՝ կմեծացնես, հետո կամուսնանաս հետը»: Տատիս մայրը չմահացավ ճանապարհին, բոլորը հասան Սևանի ավազան, տուն դրեցին ու ունեցան 9 երեխա: Պատերազմների ժամանակ երեխաներին պահում էին տատս ու իր մայրը:

Հեշտ չէր 9 երեխա պահելը, երեխաներից մեկին տատս ուղարկեց ամերիկյան մանկատուն: Պապս իմացավ, զայրացավ ու որոշեց հետ բերի իր երեխային: Ամերիկյան մանկատանը երեխաները շատ նման էին հագնված ու դրա պատճառով պապս շփոթեց իր երեխային ու վերցրեց մեկ ուրիշին: Այդ գիշեր երեխան ջերմություն ունեցավ ու նրան չկարողացան փրկել: Տատիս մայրը երբ տեսավ այդ երեխայի դիակը ասաց. «Էսի մեր ճժերից չի»: Այդ երեխային թաղեցին, ու պապս էլի գնաց մանկատուն: Պարզվեց, ամերիկյան մանկատան երեխաներին այդ առավոտ տեղափոխել էին Ամերիկա: Այդ երեխայի մասին այլևս ոչինչ չիմացան նրանք, բայց փարատվում էին իրենց վեց աղջիկներով ու երկու տղաներով:

Անահիտ Անանյան

ԼՅԿԱՁՈՐ

Մեր գյուղում ավանդույթ կա. ամեն տարի Նոր տարվա գիշերը գյուղի վերևից վառում ենք անիվներ ու գլորում: Դա շատ հին ժամանակներից է եկել և կա մինչ օրս: Մինչև Նոր տարի պատրաստվում ենք, մեր գյուղի տղաներով հավաքում շատ անիվներ, որ Նոր տարվա գիշերը՝ դեկտեմբերի 31–ին վառենք ու գլորենք:

Կարեն Մարգարյան

* * *

Լոռվա կողմերը, Սանահինի մոտ, մի գյուղ կա, անունը Խոտատափ: Հիմա մարդ քիչ ա մնացել գյուղում ապրող, իրենց տներն էլ փլված, բայց ժամանակին էնտեղ ակտիվ կյանք է եղել: Գյուղի տակով մի գետ է հոսում, անունը՝ Վարարակն: Ասում են՝ էդ գետը հողագործի արցունքներից է առաջացել: Հին ժամանակներում Խոտատափում մի հողագործ կար՝ Անդո անունով: Աղքատ մարդ էր, բայց աշխատասեր: Մի կտոր հող ուներ, հոնքով–գոնքով կվերակենդանացներ, էրկու հաց կհաներ ընտանիքի համար: Բայց մի տարի երաշտ եղավ, հողը չորացավ: Անդոն չգիտեր՝ ո՞նց պահեր ընտանիքը: Կերթար ամեն առավոտ կկանգներ հողի վրա, բայց ոչ մի օգուտ, հողն անբեր էր: Մի օր հույսը կտրած կիջնի ձորակը, որ գոնե հին հորից ջուր հանի, բայց տեսավ հորը չոր քար ու քոռով լցված: Անդոն կթուլանա, կընկնի հորի մոտ, աչքերից արցունքներ կթորվին: Արցունքները կհոսեն, կլցնեն հորը, ու հանկարծ հողը կցնցվի, քարերը կշարժվին: Անդոն կվախենա, հետ քաշվի, էդ պահին հորի տակից ջուր կբխի, կլցվի ձորակը: Ջուրը մաքուր, սառնորակ կհոսի Անդոյին հողի կողմը, կջրի չորացած ծառերն ու հողը կկենդանանա: Ասում են, որ էն օրվանից է էդ գետը հոսում: Անունը դրեցին Վարարակն, որովհետև արցունքները գետ դարձան:

Խոտատափում մինչև հիմա էդ գետից բռով ջուր կխմեն, կջրեն հողերը ու ասում են, թե գետը էնքան մաքուր է, ինչքան Անդոյի բարի սիրտը:

Մարի Առաքելյան

* * *

Շատ տարիներ առաջ մեր Տավուշի սարերում մի մեծ ժայռի վրա կար մի ամրոց, անունը՝ Աղջկաբերդ: Էդ ամրոցը թշնամիները չէին կարողանում նվաճել:

Մի օր թշնամիները շրջապատում են Աղջկաբերդը ու սկսում սպասել, որ ներսի մարդիկ հանձնվեն: Ամրոցում ապրող մարդիկ սկսում են սոված մնալ, ջուրն էլ կամաց-կամաց պակասում է: Բայց ամրոցի աղջիկները շատ խորամանկ էին, գիշերը պարաններով իջնում են ժայռից, գետից ջուր բերում ու հետ գալիս:

Մի օր թշնամին նկատում է աղջիկներին ու սկսում հետևել: Աղջիկները, տեսնելով, որ իրենց նկատել են, կտրում են պարանն ու ընկնում գետը՝ չթողնելով, որ թշնամին մտնի ամրոց: Այս պատմությունից հետո ամրոցի անունը դրեցին Աղջկաբերդ՝ ի պատիվ խիզախ աղջիկների:

Հենրիկ Սահակյան

* * *

Կոթիկ գյուղից արևելք, Ոսկեպարի լեռնաշղթայի վրա իրար շատ մոտ երկու մարդակերպ ժայռեր կան, մեկը կանգնած, մյուսը՝ կիսականգնած: Հնում այս կողմերում նահապետական սովորություն կար՝ հարս ու սկեսուր իրար հետ չէին խոսում, ամոթ էր: Մի ընտանիքում հարս ու սկեսուր որոշում են հրաժարվել այդ սովորությունից, բայց չեն կարողանում բացահայտ խոսեն, թաքուն են շփվում: Մի գարնանային օր գերդաստանի տղամարդիկ առավոտյան դուրս են գալիս, գնում հանդերը: Տան նահապետը, որն արդեն 80-ն անց ալեհեր ծերունի էր, չէր մասնակցում աշխատանքներին, բայց հաճախ էր տնից դուրս գալիս, գնում ջահելների մոտ: Այդ օրն էլ դուրս եկավ, անցավ ճանապարհի կեսը, հիշեց, որ թոփը մոռացել է, հեռվից ձայն տվեց, ոչ կինը լսեց, ոչ հարսը: Հետ եկավ տուն, դուռը բացեց ու ի՞նչ տեսավ՝ հարս ու սկեսուր դեմ-դիմաց նստած, ուրախ-ուրախ զրուցում են ու ծիծաղում: Բարկացավ նահապետն ու անիծեց. «Այ, լալալանք, քար դառնաք, քա՛ր»: Խոսքը դեռ բերանում՝ հարսը հազիվ ոտքի կանգնած, սկեսուրը կիսականգնած քարացան: Հիմա քարերն այդպես էլ կոչվում են՝ «հարս ու սկեսուրի քարեր»:

Մարի Առաքելյան

Ծրագրի տնօրեն՝ Անահիտ Ղազանչյան
Ծրագրի համակարգող՝ Նանոր Պետրոսյան
Աշխատարանի ղեկավար՝ Նունե Դանիելյան
Խմբագիր և սրբագրիչ՝ Էլեն Բաբալյան
Նկարազարդող՝ Լիլիթ Պետրոսյան
Համակարգչային ձևավորումը՝ Սուսաննա Պետրոսյանի

www.developmentprinciples.org

@development_principles

@DevelopmentPrinciples

ISBN 978–9939–1–2113–0

© Զարգացման Սկզբունքներ ՀԿ, 2025